ԼԵՅՆ ԿԻՐԿԼԱՆԴԻ ԱՆՎԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Լեհ-Ամերիկյան Ազատության Հիմնադրամը
(ծրագրի հիմնադիր)
և
Փոփոխության Առաջնորդների Հիմնադրամը
(ծրագրի համակարգող)

հայտարարում են հերթական բաց մրցույթը

Ուկրաինայի, Բելառուսի, Ռուսաստանի, Մոլդովայի, Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի, Ղազախստանի և Ղրղզստանի
հավակնորդների/թեկնածուների համար

2018/2019 ուսումնական տարում Լեհաստանում Լեյն Կիրկլանդի անվ. կրթաթոշակ
ստանալու նպատակով:

Ծրագիրը հասցեագրված է բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդ առաջնորդներին, ովքեր շահագրգռված են իրենց երկրներում և տարածաշրջանում ժողովրդավարության, տնտեսության և քաղաքացիական հասարակության զարգացման հարցերով:

Ծրագիրն առաջարկում է ուսուցում լեհական 5 քաղաքների (Վարշավա, Կրակով, Վրոցլավ, Պոզնան, Լյուբլին) բուհերից մեկում՝ 2 կիսամյակների ընթացքում, և նվազագույնը 2 շաբաթ տևողությամբ մասնագիտական պրակտիկա՝ պետական կամ մասնավոր կառույցներում:

Ծրագրին հրավիրում ենք դիմելու այն թեկնածուներն, ովքեր կրթաթոշակային ծրագրի ավարտից հետո վերադառնալու են իրենց երկրներ՝ ներդնելու այնտեղ կրթաթոշակային ծրագրի ընթացքում պատրաստած նախագծերը և ստացած գիտելիքները:

ՈԼՈՐՏՆԵՐ՝

- Տնտեսագիտություն և կառավարում,
- Կառավարում բիզնեսի, հասարակական կազմակերպությունների, մշակույթի, բնապահպանական, առողջապահական, կրթական ոլորտներում,
- Հանրային կառավարում (տեղական ինքնակառավարում),
- Իրավագիտություն,
- Հասարակագիտական գիտություններ (սոցիալական հոգեբանություն, սոցիոլոգիա)
- Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ
- Զարգացման քաղաքականություն և մարդասիրական օգնություն

Կրթաթոշակային ծրագրի ավարտական վկայական (դիպլոմ) ստանալու համար հիմք է հանդիսանալու ուսումնառության ընթացքում գրված և պաշտպանված դիպլոմային աշխատանքը: Դիպլոմային աշխատանքը կարող է կրել կա՛մ գիտական, կա՛մ պրակտիկ բնույթ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Կրթաթոշակը կազմում է ամսեկան 1800 PLN(9 ամիս):
Բացի այդ ծրագիրը ֆինանսավորում է հետևյալ ծախսերը.

- Կացություն(9 ամիս)
- Ճանապարհորդական և բժշկական ապահովագրություն
- Ճանապարհածախս դեպի Լեհաստան և հետադարձ ուղղությամբ(ըստ հաստատված սահմանափակումների)
- Քաղաքային հասարակական տրանսպորտից օգտվելու ծախսեր
- Ելքի արտոնագրի(վիզայի) վճար
- Գրքերի և գիտական պարագաների գնման դեպքում փոխհատուցում(մինչև 2700 PLN)
- Ինտեգրացիոն հավաքների մասնակցության ծախսեր
- Լեհերենի դասընթաց(հոկտեմբերից մինչև հունիս ամիսները)

ԱՅՑԻ ԾՐԱԳԻՐ

- Ծրագրի հանդիսավոր բացում (2018 թ. սեպտեմբերի 2-րդ կեսին),
- Նախապատրաստական տեղեկատվական դասընթաց (8-10 օր, 2018 թ. սեպտեմբերի 2-րդ կեսին),
- Ակադեմիական դասընթացներ Լեհաստանի համապատասխան բուհերից մեկում՝ Վարշավայում, Կրակովում, Պոզնանում, Վլոցլավում, Լյուբլինում (2 կիսամյակ),
- Կիսամյակային և դիպլոմային աշխատանքների պատրաստում յուրաքանչյուր կիսամյակի վերջում,
- 3-4 ինտեգրացիոն և պրակտիկ ուսուցողական հավաքներ,
- Մասնագիտական պրակտիկա (2-4 շաբաթ),
- Զարգացման և լեհերենի դասընթացներ (2 կիսամյակ),
- Ծրագրի հանդիսավոր փակում և դիպլոմների շնորհման արարողություն (2019 թ. հունիսի վերջին):

ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐ՝

Կիրկլանդի կրթաթոշակային ծրագիրը հասցեագրված է հետևյալ ոլորտների ներկայացուցիչներին՝

- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ
- իրավաբաններ, իրավագետներ
- ձեռներեցներ
- բիզնեսում, հասարակական կազմակերպություններում, մշակութային, կրթական, բնապահպանական, առողջապահական կառույցներում ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձինք
- մշակութային և քաղաքացիական ակտիվություն դրսևորող կառույցների (շարժումների) առաջնորդներ
- բուհերի դասախոսներ
- լրագրողներ:

ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ՝

- Վերը նշված երկրներից մեկի քաղաքացիություն և մշտական բնակություն (Լեհաստանի մշտական կացության բարտ ունեցող անձինք չեն կարող հավակնել Կիրկլանդի կրթաթոշակին),
- Բարձրագույն կրթություն (մագիստրոսի կոչում),
- Մինչև 35 տարեկան (հիմնավորված դեպքերում մինչև 40 տարեկան),
- Նվազագույնը երկու տարվա մասնագիտական աշխատանքային փորձ,
- Նվազագույնը երկու տարվա ընդմիջում՝ նախորդ՝ 6 ամսից ավելի տևած արտասահմանյան կրթաթոշակային ծրագրին մասնակցելուց հետո,
- Կիրկլանդի ծրագրի շրջանակում դասընթացներն իրականացվում են լեհերեն կամ անգլերեն (անգլերենի դասընթացները չեն կարող իրականացվել Ուկրաինայի և Բելառուսի թեկնածուների

համար), սակայն միայն լեհերենի իմացությամբ կարելի է լիարժեք օգտվել կրթական ծրագրերից, որոնք առաջարկվում են լեհական բուհերում, և մասնագիտական պրակտիկայից:
Բոլոր այն թեկնածուները, ովքեր ծրագրում են իրենց ուսուցումը լեհերենով, ծրագրի սկզբից պետք է ցուցաբերեն լեհերենի իմացության այնպիսի մակարդակ, որը թույլ կտա օգտվել ակադեմիական դասընթացներից, ինչպես նաև՝ գրել դիպլոմային աշխատանք՝ լեհերեն (B2): Որակավորման հարցազրույցի ժամանակ պետք է դրսևորել լեհերենի իմացության նվազագույնը B1 մակարդակ: Թեկնածուները, ովքեր կհաղթահարեն որակավորման հարցազրույցի փուլը, բայց չեն բավարարի լեզվի իմացության պահանջներին, կստանան լեհերենի հավելյալ թեստ հանձնելու հնարավորություն՝ 2018թ. հուլիս-օգոստոս ամիսներին(ծրագիրը կապահովի լեզվի ուսուցման համար անհրաժեշտ գրականությունը):
Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի, Ղազախստանի, Ղրղզստանի և Ռուսաստանի այն թեկնածուները, ովքեր պլանավորում են իրենց ուսումը անգլերենով, պարտադիր պետք է նշեն վերոնշյալ 5 քաղաքներից մեկում բուհի կողմից առաջարկվող կոնկրետ կրթական ծրագիր՝ անգլերենով: Այդ անձինք որակավորման հարցազրույցի ժամանակ պետք է ցուցաբերեն անգլերենի իմացության նվազագույնը B2 մակարդակ, ինչպես նաև՝ լեհերենի իմացության A1 մակարդակ: Թեկնածուները, ովքեր կհաղթահարեն որակավորման հարցազրույցի փուլը, բայց չեն բավարարի լեզվի իմացության պահանջներին, կստանան լեհերենի հավելյալ թեստ հանձնելու հնարավորություն՝ 2018թ. հուլիս-օգոստոս ամիսներին(ծրագիրը կապահովի լեզվի ուսուցման համար անհրաժեշտ գրականությունը):

ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ

կտրվի այն հավակնորդներին, ովքեր

- ակտիվ են իրենց մասնագիտական և հասարակական զբաղվածության ոլորտներում,
- ունեն նշանակալի նվաճումներ իրենց բնագավառներում,
- մինչ այդ չեն ուսանել Լեհաստանում,
- կընտրեն ուսուցման լեհերեն լեզվով տարբերակը,

ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Ընտրության եռափուլ գործընթացում կառանձնացվեն շուրջ 45 լավագույն թեկնածուները:
I փուլ – դիմում-հայտերի գնահատում
II փուլ – դիմում-հայտերի մասնագիտական գնահատում՝ համապատասխան ոլորտների փորձագետների կողմից
III փուլ – որակավորման հարցազրույցներ (ծրագրված է 30.03-30.04 2018 ժամանակահատվածում)
Անձինք, ովքեր կհրավիրվեն ընտրության երրորդ փուլին, կտեղեկացվեն այդ մասին էլեկտրոնային փոստի միջոցով՝ մինչև 2018թ. մարտի վերջը: Մրցույթի վերջնական արդյունքների մասին տեղեկությունը կուղարկվի էլ. փոստի միջոցով՝ 2018 թ. հունիս ամսվա ընթացքում: Թեկնածուները, ովքեր կընտրվեն լեհերեն լեզվից հավելյալ թեստ հանձնելու նախապայմանով, կկարողանան հանձնել այդ թեստը 2018 թ. հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում՝ լեհական դիվանագիտական ներկայացուցչություններում:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ՝

1. Առցանց լրացված մասնակցության հայտ՝
   - անձնական տվյալների հարցաթերթ
   - Կրթաթոշակային ծրագրին մասնակցելու ցանկության հիմնավորում, Լեհաստանում կացության վերաբերյալ նախագիծ, որը կներառի աշխատանքի նկարագրությունը, որը կստեղծվի ծրագրի ավարտին (սպասվող արդյունքներ), ինչպես նաև՝ ծրագրի իրականացման վերաբերյալ առաջարկներ և ապագայում նախագծերի նկարագրություն՝ կապված ծրագրի ընթացքում կուտակած գիտելիքների կիրառման հետ (4000-6000 նիշ՝ բացատներով):

2. Երկու երաշխավորագիր, որոնցում ներկայացված կլինեն հայտատուի ունեցած նվաճումները և որակավորումները, ինչպես նաև՝ ծրագրերը՝ կապված հետագա զարգացման և մասնագիտական աշխատանքի հետ: Նամակները պետք է գրված լինեն լեհերեն, անգլերեն կամ ռուսերեն և ուղարկվեն էլեկտրոնային փոստի միջոցով:
3. Բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը (առկայության դեպքում, գիտությունների թեկնածուի վկայականի պատճենը)՝ ուղարկված էլեկտրոնային փոստի միջոցով:

ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ՝

Ծրագրի մանրամասն նկարագրության և հայտաձևի լրացման կարգին կարելի է ծանոթանալ անմիջապես այցելելով www.kirkland.edu.pl կայք, կամ էլեկտրոնային նամակագրության միջոցով՝ դիմելով ծրարի համակարգողներին:

Հայտաձևը պետք է լրացվի առցանց: Հայտաձևը առցանց լրացնելուց հետո անհրաժեշտ է տպել համակարգի կողմից գեներացված հայտը հաստատող էջը: Տվյալ ստորագրված էջին կցել հավակնորդի արդիական նկարը և ուղարկել փոստով Կիրկլանդ ծրագրի հասցեին:

Երկու երաշխավորագրերի և դիպլոմի պատճենների էլեկտրոնային տարբերակները (լուսապատճենված՝ սկան արված) պետք է նույնպես ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ kirkland@kirkland.edu.pl:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐ

Կիրկլանդի 2018/2019 կրթաթոշակային ծրագրի հայտերի ներկայացման վերջնաժամկետն է՝

2018 թ. -ի մարտի 1:

Վերը նշված վերջնաժամկետից ուշ ստացված հայտերը չեն դիտարկվի:

ԾՐԱԳՐԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՆ Է

Լեյն Կիրկլանդ (1922-1999), ամերիկյան արհմիությունների (AFL-CIO) բազմամյա առաջնորդ, Լեհ-Ամերիկյան Զեռներեցության Հիմնադրամի տնօրենների խորհրդի անդամ, Լեհ – Ամերիկյան Ազատության Հիմնադրամի նախաձեռնող խմբի անդամ: 80-ական թվականներին, իր մասնակցությամբ և հեղինակությամբ աջակցում էր լեհական «Սոլիդառնոշչ» շարժմանը: Հասկանում և աստարում էր Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի այլ ժողովուրդների ազատության և ժողովրդավարության ձգտումները: Պարգևատրվել է բարձրագույն պարգևներով. այդ թվում՝ ամերիկյան «Ազատության Մեդալով» և լեհական «Սպիտակ Արծվի Շքանշանով»:

ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ՝

Fundacja Liderzy Przemian
www.leadersofchange.pl

Program Kirklanda
al. Jerozolimskie 133 lok. 56, 02-304 Warszawa
E-mail: kirkland@kirkland.edu.pl
www.kirkland.edu.pl

Polsko-Amerykańska Fundacja Wolności — Polish-American Freedom Foundation

ԼԵՀ – ԱՄԵՐԻԿՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ (PAFW)՝ ծրագրի հիմնադիր

ԼԱԱՀ-ը սկսել է իր գործունեությունը 2000 թվականին: Հիմնադրամի գլխավոր նպատակներն են՝ ամրապնդել ժողովրդավարությունը, ուժեղացնել քաղաքացիական հասարակությունը, հավասարեցնել անձնական և հասարակական զարգացման հնարավորությունները, զարգացնել շուկայական տնտեսությունը և Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների հետ կիսվել լեհական փորձով՝ տրանսֆորմացիայի բնագավառում: ԼԱԱՀ-ը ֆինանսավորում է իր գործունեությունը հիմնադրամի եկամուտներից, որի աղբյուրն են հանդիսանում Լեհ-Ամերիկյան Ձեռնարկատիրության Հիմնադրամի (ԼԱՁՀ) միջոցները: Մինչ օրս ԼԱՁՀ-ը Հիմնադրամին է փոխանցել 250 մլն ԱՄՆ դոլար: 2000 թվականից ի վեր Հիմնադրամը իր ծրագրերի իրականացման համար տրամադրել է ավելի քան 100 մլն ԱՄՆ դոլար: Հիմնադրամի ծրագրերը համակարգվում են մի շարք լեհական հասարակական կազմակերպությունների միջոցով՝ համաձայն Հիմնադրամի կողմից մշակված սկզբունքների և կանոնակարգերի:

Լեյն Կիրկլանդի անվ. Կրթաթոշակային Ծրագիրը ԼԱԱՀ-ի երկարաժամկետ նախաձեռնություն է, որը կյանքի կոչվեց 2000 թվականին և 2016 թվականից համակարգվում է Փոփոխության Առաջնորդների Հիմնադրամի կողմից: Հիմնադրամի և իրականացվող ծրագրերի մասին լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ http://www.pafw.pl կայքից:

FUNDACJA LIDERZY PRZEMIAN

ՓՈՓԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ (FLP)
ծրագրի համակարգող

Հիմնադրամը ստեղծվել է 2016թ.-ի փետրվարին Լեհ-Ամերիկյան Ազատության Հիմնադրամի կողմից: Հիմնադրամի նպատակն է համակարգել Լեհ-Ամերիկյան Ազատության Հիմնադրամի կողմից ֆինանսավորվող ծրագրերը՝ Լեյն Կիրկլանդի անվան կրթաթոշակային ծրագիրը և Ուսուցողական այցեր դեպի Լեհաստան ծրագիրը: Հիմնադրամը Լեհ-Ամերիկյան Ազատության հիմնադրամի, Նատոլինի Եվրոպական Կենտրոնի և Գերմանական Մարշալ Հիմնադրամի հետ կազմակերպում է նաև Վարշավայի Եվրո-Ատլանտյան ամառային դպրոցը /WEASA/:

Հիմնադրամին փոխանցված բոլոր ծրագրերը համակարգվում են փորձառու աշխատակազմի կողմից: Նոր անձանց ներգրավումը և նրանց փորձի փոխանցումը աշխատակազմի գործառույթներից մեկն է: Ցանկանում ենք Լեհաստանի լավագույն փորձը փոխանցել ակտիվ անձանց՝ Արևելյան Եվրոպայից, Կովկասից և Կենտրոնական Ասիայից: Գիտական հաստատությունների, հանրային և հասարակական սեկտորների հետ համատեղ՝ ցանկանում ենք ներմուծել պրակտիկայի և Լեհաստան կատարվելիք գիտական այցերի նոր ձևեր:

Ստեղծում ենք միջավայր այն մարդկանց համար, ովքեր հավատում են դրական փոփոխություններին:

Հավելյալ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել հիմնադրամի կայք: **www.leadersofchange.pl**